ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ
N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/31

ք. Երևան «06» 08 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Հ. Լևոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 4032820 (չորս միլիոն երեսուներկու հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության

օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Համաշիննախագիծ» ՍՊԸ
ք.Երևան, Կառավարական տուն 2	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Սաֆարյան 3-րդ նրբ., տուն 8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011035251	Հ/Հ 1570063611560100
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 03309254
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
..... Վ. Գասպարյան	..... Հ. Լևոնյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
«06» «08» 2020թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-20/31 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Ծառայության						
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմանը (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը ՀՀ դրամ,	Ընդհանուր քանակը	Մատուցման ժամկետը
1	98111140/50	հեղինակային հսկողության ծառայություններ-1	«Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	480760	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
2	98111140/51	հեղինակային հսկողության ծառայություններ-2	«Երևանի Հ. Գալստյանի անվան հ. 83 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	517280	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
3	98111140/52	հեղինակային հսկողության ծառայություններ-3	«Տաշիրի Արտակ Խաչատրյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	301500	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
4	98111140/53	հեղինակային հսկողության ծառայություններ-4	«Իջևանի Գառնիկ Անանյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական	դրամ	351770	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների

			էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում				շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
5	98111140/54	հեղինակային հսկողության ծառայություններ 5	«Վանաձորի Մովսես Խորենացու անվան N 17 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	337180	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
6	98111140/55	հեղինակային հսկողության ծառայություններ-6	«Գյումրու N 26 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	375540	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
7	98111140/56	հեղինակային հսկողության ծառայություններ-7	«Երևանի հ. 105 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	298900	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
8	98111140/57	հեղինակային հսկողության ծառայություններ-8	«Երևանի Գուրգեն Մարգարյանի անվան հ. 94 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	296670	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:
9	98111140/58	հեղինակային հսկողության ծառայություններ-9	«Աշտարակի Ն. Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	611400	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը:

10	98111140/59	հեղինակային հսկողության ծառայություններ 10	«Արմավիրի Ռ. Եղոյանի անվան հ. 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում	դրամ	461820	1	Ծառայության մատուցումը սկսվում է 2020 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ յուրաքանչյուր Չափաբաժնի համար նախատեսված կրթական օբյեկտների շինարարական աշխատանքների և որակի տեխնիկական հսկողության ծառայությունների առկայության դեպքում, և իրականացվելու է դրանց զուգահեռ. բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 1 ը:

Պատվիրատու

Կատարող

Վ. Գասպարյան

Հ. Լևոնյան

Հավելված N 2
«06» «08» 2020թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/31 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում*												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/50	հեղինակային հսկողության ծառայություններ-1								480760	480760	480760	480760	480760	**480760**
2	98111140/51	հեղինակային հսկողության ծառայություններ-2								517280	517280	517280	517280	517280	**517280**
3	98111140/52	հեղինակային հսկողության ծառայություններ-3								301500	301500	301500	301500	301500	**301500**
4	98111140/53	հեղինակային հսկողության ծառայություններ-4								351770	351770	351770	351770	351770	**351770**
5	98111140/54	հեղինակային հսկողության ծառայություններ-5								337180	337180	337180	337180	337180	**337180**
6	98111140/55	հեղինակային հսկողության ծառայություններ-6								375540	375540	375540	375540	375540	**375540**
7	98111140/56	հեղինակային հսկողության ծառայություններ-7								298900	298900	298900	298900	298900	**298900**

8	98111140/57	հեղինակային հսկողության ծառայություններ-8								296670	296670	296670	296670	296670	**296670**
9	98111140/58	հեղինակային հսկողության ծառայություններ-9								611400	611400	611400	611400	611400	**611400**
10	98111140/59	հեղինակային հսկողության ծառայություններ-10								461820	461820	461820	461820	461820	**461820**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու

----------Վ. Գասպարյան

Կատարող

---------- Հ. Լևոնյան